

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 2013 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ

«ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 22 ծրագրերի գծով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը նախատեսվել է 66.9 մլրդ դրամ: Փաստացի կատարողականը կազմել է շուրջ 30.0 մլրդ դրամ: Իրականացված ծրագրերի գծով տնտեսումը կազմել է 137,8 մլն դրամ:

Վերոհիշյալ ծրագրերով նախատեսված աշխատանքները հաշվետու ժամանակաշրջանում հիմնականում իրականացվել են ամբողջ ծավալով, բացառությամբ վարկային ծրագրերով իրականացվող աշխատանքների, որոնց թերակատարումները կապված են շինարարական աշխատանքները ժամկետից ուշ սկսելու հետ (բետոնացման աշխատանքները սկսվել են 2013թ սեպտեմբերին, վարկային համաձայնագիրը ուշ է կնքվել):

Ծրագրի անվանումը՝ «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարի աշխատակազմի մասով)»

Ծրագրով տարեսկզբին նախատեսվել է 51,692.8 հազար դրամ: Կատարողականը կազմել է 86.2%, տարբերությունը՝ 7,179.0 հազար դրամ, որը ծրագրի իրականացման ընթացքում որոշ տնտեսագիտական հողվածներով առաջացած տնտեսումների հանրագումարն է:

Ծրագրի անվանումը՝ «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարության աշխատակազմի մասով)»

Ծրագրով տարեսկզբին նախատեսվել է 363,064.7 հազար դրամ: , Կատարողականը կազմել է 95.1%, տարբերությունը՝ 17,761.9 հազար դրամը ծրագրի իրականացման ընթացքում որոշ տնտեսագիտական հողվածներով առաջացած տնտեսումների հանրագումարն է:

Ծրագրի անվանումը՝ «Վարչական օբյեկտների հիմնանորոգում»

Ծրագրով նախատեսված էր նոր վերելակի ձեռքբերում: 2013 թվականին տարեկան ճշտված պլանը կազմել է 16,092.0 հազար դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի եղել, քանի որ վերելակի մրցույթը երկու անգամ հայտարարվել և չի կայացել:

Ծրագրի անվանումը՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ

ՀՀ կառավարության 05.12.2013թ.թիվ 1355-Ն որոշմամբ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը հատկացվել է 15,000.0 հազար դրամ՝ ավտոմեքենայի ձեռքբերման համար: Ծրագրի կատարողականը կազմել է 100%: Ձեռք է բերվել ամենագնաց՝ բարդ կլիմայական պայմաններում ճանապարհները վերահսկելու համար:

«ՀՀ պետությունից դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներից կատարված ծախսեր» հոդվածով հասկացվել է 1,845,000.0 հազ. դրամ՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով, որի հաշվին իրականացվում է թվայնացման ծրագրերը: Թվայնացման պայմանագրերի արժեքը կազմում է 5,932.800.0 հազար դրամ, որից կտնտեսվի շուրջ 144.0 մլն դրամ:

Ճանապարհային տնտեսություն

ՀՀ 2013թ. պետական բյուջեի «Պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգում» և «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» ծրագրերի իրականացման համար 2013թ. տրամադրվել է 4,0 մլրդ դրամ: Կատարվել է 99.9 մլն դրամ վճարում 2012թ. կատարված շինարարական աշխատանքների դիմաց և 15.7 մլն դրամ 2012թ. կատարված տեխնիկական հսկողության աշխատանքների դիմաց:

Հիմնանորոգվել են 2635.0 մլն դրամ ընդհանուր արժեքով 22.1 կմ երկարությամբ ճանապարհահատվածներ: Բացի դրանից, մրցույթների արդյունքում ձևավորված տնտեսումների և կատարված վերաբաշխումների արդյունքում հիմնանորոգվել են նաև հրատապ ճանաչված 985,1 մլն դրամի լրացուցիչ 10.8 կմ երկարությամբ ճանապարհահատվածներ և Վայք քաղաքի մոտի հենապատը:

Ընդհանուր առմամբ, ՀՀ պետական բյուջեով նախատեսված «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագրով 2013թ. կատարվել են 32.9 կմ երկարության ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքներ՝ 3620.0 մլն դրամ արժեքով:

Բացի դրանից, իրականացվել են նախագծային և հեղինակային հսկողության աշխատանքներ, որոնց դիմաց վճարվել է 71.8 մլն դրամ և շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության աշխատանքներ, որոնց դիմաց վճարվել է 20.2 մլն դրամ:

Տարեսկզբի հաստատված պլանով նախատեսված 3,879.727.0 հազ. դրամը ավելացվել է 39,134.5 հազար դրամով, ճշտված պլանը կազմել է 3,918.861.5 հազ. դրամ, կատարողականը՝ 97.7%-ը: Տնտեսումը՝ 91,426.4 հազար դրամ:

Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում ծրագիր

Իրականացվել է Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների ընթացիկ ամառային (2752.43 կմ) և ընթացիկ ձմեռային (3132.74 կմ) պահպանման, ավտոմոբիլային ճանապարհների և դրանց վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների (3 հատ), կամուրջների (5 հատ) և պարսպող հարմարանքների (468488 գծ.մ), ինչպես նաև առանձին պահպանման չհանձնվող 4 թունելի և 558 կամուրջների պահպանման աշխատանքներ՝ 5.5 մլրդ դրամ արժեքով:

Տարեկազմի հաստատված պլանով նախատեսված էր 5,550.315.0 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 5,505.504.3 հազար դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը՝ 5,485.858.8 հազ. դրամ, որը կազմում է ճշտված պլանի 99.6%-ը: Պայմանագրային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով կապալառուներից պահվել է 19,6 մլն դրամ:

«Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» ծրագրի տարեկազմին հաստատված պլանով նախատեսված էր 120,273.0 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 117,144.3 հազ. դրամ, որից ֆինանսավորումը և դրամարկղային ծախսերը կազմել են 116,631.7 հազ. դրամ: Իրականացվել են 6 տրանսպորտային օբյեկտների նորոգման աշխատանքներ, այդ թվում մրցույթների արդյունքում ձևավորված տնտեսումների և կատարված վերաբաշխումների արդյունքում 12.9 մլն դրամի Քուչակ գյուղի կամրջի ծածկի վերականգնման աշխատանքները: Իրականացվել են նաև տեխնիկական հսկողության աշխատանքներ, որոնց դիմաց վճարվել է 1.9 մլն դրամ:

Ծրագրի անվանումը՝ «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր»

Նշված ծրագրով 2013 թվականին տարեկան ճշտված պլանը կազմել է 2,294,598.6 հազար դրամ, որից վարկային միջոցները՝ 2,088,428.0 հազար դրամ, համաֆինանսավորումը՝ 206,170.6 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 1,899,535.78 հազար դրամ, որից վարկային միջոցները՝ 1,510,313.48 հազար դրամ, համաֆինանսավորումը՝ 389,222.3 հազար դրամ: Ծրագիրը կատարվել է 82.8%-ով: Թերակատարման պատճառն այն է, որ տարեկազմին ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասով 2013 թվականին կատարված աշխատանքների մի մասը վճարվել է 2012 թվականին ծրագրով խնայված և ԾԻԳ-ի բանկային հաշվում տարեկազմում առկա միջոցների հաշվին:

2013թ ավարտվել են 2012թ. մեկնարկած 35.97 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքներ: Ծրագրի տնտեսումների հաշվին հիմնանորոգվել է ևս լրացուցիչ 4.2 կմ ճանապարհ: Իրականացվել է նաև շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն, ծրագրի ֆինանսական աուդիտ:

Ծրագրի անվանումը՝ «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր»

Ծրագրի շրջանակներում կնքվել են ՀՀ 6 մարզերում գտնվող 73 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքների 7 պայմանագիր 7,818.6 մլն դրամ ընդհանուր գումարով: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին տարեկան ճշտված պլանը կազմել է 8,042.884.0 հազար դրամ, որից վարկային միջոցները՝ 6,634.307.2 հազար դրամ, համաֆինանսավորումը՝ 1,408.576.8 հազար դրամ: Փաստացի ծախսը կազմել է 6,461.922.29 հազար դրամ: Ծրագիրը կատարվել է 80.3%-ով: Ծրագրի թերակատարումը պայմանավորված է վարկային համաձայնագրի ուշ կնքմամբ, որի հետևանքով շինարարական աշխատանքներն ուշ են սկսվել և

դրանց ավարտը նախատեսվել է 2014թ:

Ծրագրի անվանումը՝ «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր» (Տրանշ 1)

2013 թվականին տարեկան ճշտված պլանը կազմել է 11,943.419.6 հազար դրամ, որից վարկային միջոցները՝ 10,778.344.4 հազար դրամ, համաֆինանսավորումը՝ 1165075.2 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 407,428.2 հազար դրամ, որից վարկային միջոցները՝ 310190.9 հազար դրամ, համաֆինանսավորումը՝ 97,237.3 հազար դրամ: Ծրագիրը կատարվել է 3.4%-ով: Փաստացի ծախսը կատարվել է շինարարական աշխատանքների կատարողականի, խորհրդատվական ծառայությունների ու հարկերի վճարների դիմաց:

Տրանշ 1-ի շինարարական աշխատանքներն իրականացվում են Իգոյուքս Կորսան ընկերության /Իսպանիա/ կողմից, Տրանշ 1-ի պայմանագրի արժեքը 70,44 մլն ԱՄՆ դոլար կամ շուրջ 28,5 մլրդ դրամ), իսկ ծրագրի կառավարումը և տեխնիկական վերահսկումը՝ Սաֆեթ և Էպոխա ընկերությունների կոնսորցիումը /Ֆրանսիա-Բելգիա-Իսպանիա/ (պայմանագրի ընդհանուր արժեքը Տրանշ 1-ի և Տրանշ 2-ի համար կազմում է 8,050 մլն ԱՄՆ դոլար՝ ներառյալ հարկերը):

2013թ. դեկտեմբերի ամսվա դրությամբ կատարված են Տրանշ 1-ի (Արտաշատ – Երևան, Երևան - Աշտարակ) ճանապարհի աջակողմյան հատվածի շուրջ 25 կմ-ի բետոնացման աշխատանքները: Մասնավորապես, Տրանշ 1-ի Հատված 2-ում (Երևան-Արտաշատ) ավտոճանապարհի ձախակողմյան հատվածում իրականացվել է շուրջ 16550 մ բետոնյա ծածկի տեղադրման աշխատանքներ, իսկ Հատված 3-ում (Երևան-Աշտարակ) ավտոճանապարհի աջակողմյան հատվածում՝ 8270մ բետոնյա ծածկի տեղադրման աշխատանքները: Վերոնշյալ հատվածում դեռևս ավարտված չեն կարանների (ճաքերի) լցումը և մակերևույթի հարթության չափագրման աշխատանքները: Համապատասխան կատարողական ակտերը ներկայացվել են տեխնիկական հսկողություն իրականացնող խորհրդատուին՝ հաստատման: Հաշվի առնելով, որ պայմանագրով Տրանշ 1-ի գծով նախատեսված աշխատանքները տեխնիկական առումով բերված չեն ավարտուն վիճակի, ուստի համապատասխան վճարումներ չեն կատարվել:

2013թ. ավարտի դրությամբ Տրանշ 1-ով իրականացվել է շուրջ 18.0 մլն ԱՄՆ դոլարի շինմոնտաժային աշխատանք:

Ծրագրի անվանումը՝ «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր» (Տրանշ 2)

2013 թվականին տարեկան ճշտված պլանը կազմել է 29,329.009.4 հազար դրամ, որից վարկային միջոցները՝ 27,273.329.9 հազար դրամ, համաֆինանսավորումը՝ 2,055.679.5 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 7,936.991.0 հազար դրամ, որից վարկային միջոցները՝ 7,646.337.7 հազար դրամ, համաֆինանսավորումը՝ 290,653.3 հազար դրամ: Վարկային միջոցների ծրագիրը կատարվել է 28%-ով, իսկ համաֆինանսավորման գծով՝ 14.1%: Ծրագրի թերակատարումը պայմանավորված է շինարարական աշխատանքների պայմանագրի կնքման ժամկետի հետ կապված՝

մոտ մեկ տարի ուշացում, քան ի սկզբանե պլանավորված էր:

Տրանշ 2-ի շինարարական աշխատանքներն իրականացվում են Իգոյուքս Կորսան ընկերության /Իսպանիա/ կողմից (պայմանագրի արժեքը Տրանշ 2-ի համար շուրջ 179,5 մլն ԱՄՆ դոլար կամ շուրջ 72,7 մլրդ դրամ), իսկ ծրագրի կառավարումը և տեխնիկական վերահսկումը՝ Սաֆեթ և Էպտիսս ընկերությունների կոնսորցիումը /Ֆրանսիա-Բելգիա-Իսպանիա/:

Միաժամանակ նախապատրաստվել է շուրջ 10 մլն ԱՄՆ դոլարի չափով կանխավճարի տրամադրում Տրանշ 2-ի երրորդ ենթահատվածի համար:

2013թ. ավարտի դրությամբ Տրանշ 2-ի գծով իրականացվել է շուրջ 3.5 մլն ԱՄՆ դոլարի աշխատանք:

Տրանշ 2, Հատված 1 (Աշտարակ-Թալին) ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների մեկնարկի հրահանգը ճանապարհի 1-ին ենթահատվածի (կմ58+540 – կմ67+776, 9.2կմ) և 2-րդ ենթահատվածի (կմ29+600 – կմ31+140, կմ46+208 – կմ58+540 և կմ67+776 – կմ69+810 ընդհանուր 15.9կմ) համար տրված է: Նշված 2 ենթահատվածներում կապալառուն 2013թ.-ի հուլիսի 24-ից սկսել է և դեռևս շարունակում է հնագիտական պեղումների և հետազոտությունների իրականացումը: 3-րդ ենթահատվածի հողերի օտարումն և տարաբնակեցման գործընթացը ավարտվել է մասնակի և երրորդ անձանց իրավունքներից ազատ տարածքը՝ ԱԶԲ հաստատումը ստանալուց հետո, կհանձնվի կապալառուին՝ շինարարական աշխատանքները նշված տարածքներում իրականացնելու համար: Ճանապարհահատվածի 3-րդ ենթահատվածում 154 հողատարածքներ դեռևս օտարված չեն, որոնք ՀՀ կառավարության 2013թ. սեպտեմբերի 26-ին ընդունված համապատասխան որոշմամբ ճանաչվել են բացառիկ՝ գերակա հանրային շահ:

Նշված տարածքների օտարման գործընթացն ապահովելու համար իրականացվում են համապատասխան տեղագնման և գնահատման աշխատանքներ, որոնց արդյունքներով կկնքվեն համապատասխան օտարման պայմանագրերը (չկնքվելու դեպքում կներկայացվեն համապատասխան դատական հայցեր):

Ծրագրի անվանումը՝ «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի և Վրաստանի միջև գտնվող Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցման ծրագիր»

2013 թվականին տարեկան ճշտված պլանը կազմել է 7,152.3 հազար դրամ՝ միայն համաֆինանսավորման միջոցների հաշվին, փաստացի ծախսը՝ նույնքան: Ծրագիրը բացվել է 2013 թվականի դեկտեմբերի 26-ին՝ ըստ ՀՀ կառավարության N 1473 - Ն որոշման՝ Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցման աշխատանքներն իրականացնելու նպատակով: Փաստացի ծախսը կատարվել է հետևյալ ուղղություններով՝ աշխատավարձի վճարում, գործուղման ծախսեր, խորհրդատվական ծառայությունների վճարում, որոշ ներկայացուցչական ծախսեր:

Օրագրի անվանումը՝ «Պետական աջակցություն «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ին» բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման ծածկագիր՝ 04.05.01.08

Օրագրով նախատեսված էր 26352.9 հազար դրամ, ճշտված նախահաշիվը նույնպես կազմել է 26352.9 հազար դրամ, ֆինանսավորումը և փաստացի ծախսը կազմել են 26352.8 հազար դրամ՝ կատարվել է 100%-ով:

«Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են ՀՀ միասնական երթուղային ցանցի մշակման և զարգացման, ուղևորահոսքի մշտական ուսումնասիրության, անվճար երթևեկության վկայականների պատրաստման և տրամադրման, միջպետական բեռնափոխադրումների թույլտվությունների բլանկների պատրաստման, այլ պետությունների հետ փոխանակման և ՀՀ փոխադրողներին տրամադրման գործառույթներ: Առանձին խմբերի ՀՀ քաղաքացիներին հատկացվել են անվճար երթևեկության 984 վկայականներ:

Օրագրի անվանումը՝ «ՀՀ-ում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆ) համակարգի ստեղծում և ներդրում»

2013 թվականին ապահովվել է բեռնատար տրանսպորտային միջոցների վրա հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆ) համակարգի անընդհատ և անխափան աշխատանքը: Տրամադրվել է 43 տախոգրաֆի քարտ: Տարեսկզբի հաստատված պլանով նախատեսված էր 26,400.0 հազ. դրամ, որից կատարվել է 25,195.5 հազ. դրամ ֆինանսավորում՝ ներկայացված 45,000 եվրո կատարողականի դիմաց, փաստացի ծախսը կազմել է 25,195.5 հազ. դրամ: Տարբերությունը պայմանավորված է եվրոյի օրվա փոխարժեքի տատանման հետ: Տնտեսումը կազմել է 1,204.6 հազար դրամ:

Օրագրի անվանումը՝ «Երկաթուղու շինարարություն» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրում»

Օրագրով նախատեսված է 43,772.9 հազար դրամ, ճշտված պլանը կազմել է 43,943.0 հազար դրամ, ֆինանսավորումը և փաստացի ծախսը կազմել է 43,792.0 հազար դրամ: Օրագիրը կատարվել է 99.7%-ով:

2013 թվականի հունվարի 18-ին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ և «ՌԱՄԻԱ» ՖՁԷ-ի միջև քննարկվել և կնքվել է փոխըմբռնման հուշագիր՝ (հետագայում նաև կոնցեսիոն պայմանագիր) երկու երկրները իրար կապող երկաթուղու տեխնիկատնտեսական հիմնավորման, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, նախագծման, կառուցման և շինարարության նախապատրաստական փուլի վերաբերյալ: 2013 թվականից 18 ամսվա ընթացքում կողմերը համագործակցել են տեխնիկական, առևտրային, տնտեսական, սոցիալական, բնապահպանական, ինչպես նաև իրագործելիությանը և նախագծմանը վերաբերող այլ տեղեկատվության փոխանակման հարցում, որպեսզի Կոնցեսիոններին հնարավորություն ընձեռվի կազմել Հայաստանի Հարավային երկաթուղու իրագործելիության լիարժեք ուսումնասիրություն:

Օրագրի իրականացման նպատակով առաջիկա քայլերից ավարտվել է տեխնիկատնտեսական հիմնավորումը և «ՌԱՍԻԱ» ՖԶԷ-ի կողմից ներկայացված երկաթգծի շինարարության ծրագիծը: Ներկայացված տարբերակով ծրագրի ինքնաձախսածածկումը կտևի մոտ 24 տարի՝ 3.5 մլրդ դոլար արժողությամբ, իսկ երկաթգծի շինարարությունը տևելու է 6 տարի: Երկաթգիծը, որի երկարությունը Գագարին-Գավառ հատվածի հետ միասին կազմելու է 305 կմ, պետք է ունենա 19.6 կմ ընդհանուր երկարությամբ 86 կամուրջ և 102.3 կմ ընդհանուր երկարությամբ 60 թունել:

Օրագրի անվանումը՝ «Ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրում»

2013 թվականին նախատեսված է 328,825.0 հազար դրամ, ճշտված պլանը, ֆինանսավորումը և փաստացի ծախսը նույնպես կազմել է 328,825.0 հազար դրամ: Հայաստանի Հանրապետության և «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված կոնցեսիոն պայմանագրի 2-3 հոդվածի 2-րդ կետի համաձայն Կոնցեդենտը սուբսիդավորում է (մասնակի փոխհատուցում է) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումների կոնցեսիոնների տարեկան վնասը կոնցեսիոնների կողմից անկախ աուդիտորի կողմից այդ վնասների (տարեկան վնասի 15 % ի չափով) հաստատված հաշվարկների ներկայացման պարագայում:

Օրագրի անվանումը՝ «Հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայություններ»

Օրագրով նախատեսված 379,087.4 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կատարվել է 100 %-ով: «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են ՀՀ հաճախությունների բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոէթերի մոնիտորինգի, Ռադիո-Էլեկտրոնային Միջոցների և Բարձր Հաճախականության Սարքավորումների տեղադրման, փորձաքննության և չափումների անցկացման, կապի շինարարական աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, էթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման գործառույթները:

Օրագրի անվանումը՝ «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն»

Համաձայն ՀՀ վարչապետի համապատասխան որոշումների արտասահմանյան պաշտոնական պատվիրակությունների ընդունելության համար հատկացվել է 4,559.0 հազար դրամ, որը ամբողջովին կատարվել է:

Օրագրի անվանումը՝ «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ»

ՀՀ վարչապետի համապատասխան որոշումների համաձայն կատարվել են պաշտոնական գործուղումներ, որոնց գծով հատկացվել է 21,641.5 հազար դրամ, որը ամբողջովին կատարվել է:

Ծրագրի անվանումը՝ «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճարելի բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վճարներ»

Ծրագրի շրջանակներում 2013 թվականի ընթացքում իրականացվել է 68.3 հազար դրամի վճարումներ:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության սոցիալական փաթեթի ապահովում ծրագրի 2013 թվականի ճշտված պլանը կազմել է 22,176.00 հազ. դրամ, որից ֆինանսավորումը և փաստացի ծախսը կազմել է 17,082.7 հազ. դրամ, որը կազմում է պլանի 77%-ը, ինչը պայմանավորված է միևնույն մարմնում առնվազն 6 ամիս աշխատած շահառուների թվաքանակով: